



*Համարը N 238-Ն*  
*Տիպը* Հրաման  
*Սկզբնաղբյուրը* ՀՀԳՏ 2015.11.16/27(539) Հոդ.320  
*Ընդունող մարմինը* Գյուղատնտեսության նախարար  
*Ստորագրող մարմինը* Գյուղատնտեսության նախարար  
*Վավերացնող մարմինը*  
*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* 26.11.2015

*Տեսակը* Հիմնական  
*Կարգավիճակը* Գործում է  
*Ընդունման վայրը* Երևան  
*Ընդունման ամսաթիվը* 03.11.2015  
*Ստորագրման ամսաթիվը* 03.11.2015  
*Վավերացման ամսաթիվը*  
*Ուժը կորցնելու ամսաթիվը*

**☒ Կապեր այլ փաստաթղթերի հետ**

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿՆԵՐԻ ՀԱՄՏԵՍԱՅԻՆ  
 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*«Գրանցված է»*  
 ՀՀ արդարադատության  
 նախարարության կողմից  
 10 նոյեմբերի 2015 թ.  
 Պետական գրանցման թիվ 10615447

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

3 նոյեմբերի 2015 թ.

N 238-Ն

**Հ Ր Ա Մ Ա Ն**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿՆԵՐԻ ՀԱՄՏԵՍԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ  
 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 30-ի N 867-Ն որոշման 2-րդ կետով.

*Հրամայում եմ՝*

1. Հաստատել հայկական կոնյակների համտեսային հանձնաժողովի գործունեության կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ագրովերամշակման զարգացման վարչության պետ Գ. Ղազարյանին՝ սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:
3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Ռ. Մակարյանին:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Ս. Կարապետյան**

Հավելված  
ՀՀ գյուղատնտեսության նախարարի  
2015 թվականի նոյեմբերի 3-ի  
N 238-Ն հրամանի

**Կ Ա Ր Գ**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿՆԵՐԻ ՀԱՄՏԵՍԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1. Սույն կարգով սահմանվում է հայկական կոնյակների համտեսային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) գործունեության կարգը:
- 2. Հանձնաժողովն իրականացնում է հայկական կոնյակների իսկության հավաստման և նույնականացման նպատակով հայկական կոնյակների ընտրված նմուշների զգայորոշման ցուցանիշների համտեսում և տալիս եզրակացություն:
- 3. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են բարձր մասնագիտական որակավորում, զինեգործության ոլորտում բազմամյա աշխատանքային փորձ և հմտություն ունեցող մասնագետներ: Հանձնաժողովի կազմը բաղկացած է 7 անդամից:
- 4. Հանձնաժողովը կազմված է նախագահից, քարտուղարից և անդամներից: Հանձնաժողովի քարտուղարը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության անդամաբաժնի անվտանգության պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) ներկայացուցիչը:
- 5. Հանձնաժողովի նախագահն ընտրվում է Հանձնաժողովի կազմից, Հանձնաժողովի որոշմամբ, բաց քվերակությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ:

**II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

6. Հանձնաժողովի խնդիրներն ու նպատակներն են համտեսի միջոցով սպառողներին թյուրիմացության մեջ զգող գործոնների կանխարգելումը, հայկական կոնյակների իսկության մասին հավաստումը:

**III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

- 7. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:
- 8. Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե նիստին մասնակցում են Հանձնաժողովի անդամների կեսից ավելին:
- 9. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Հանձնաժողովի նախագահն ունի վճռորոշ ձայնի իրավունք:
- 10. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը ստորագրում են Հանձնաժողովի նախագահն ու քարտուղարը:
- 11. Հանձնաժողովի նիստը նախագահում է Հանձնաժողովի նախագահը: Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ նրան փոխարինում է Հանձնաժողովի անդամներից մեկը, իսկ Հանձնաժողովի նախագահի համապատասխան հանձնարարական տալու անհնարինության դեպքում՝ Հանձնաժողովի նախագահն ընտրվում է նիստին մասնակցող անդամների կողմից՝ անդամներից մեկը: Հանձնաժողովի նախագահի ձայնը դառնում է վճռորոշ:
- 12. Հանձնաժողովի նախագահը՝
  - 1) հրավիրում է Հանձնաժողովի նիստեր,
  - 2) ղեկավարում է Հանձնաժողովի աշխատանքները,
  - 3) վարում է Հանձնաժողովի նիստերը,
  - 4) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:
- 13. Հանձնաժողովի քարտուղարը՝
  - 1) կազմակերպում է Հանձնաժողովի աշխատանքները,
  - 2) իրականացնում է Հանձնաժողովի նիստում քննարկվելիք նյութերի նախապատրաստումը,
  - 3) տեղեկացնում է Հանձնաժողովի անդամներին նիստի անցկացման օրվա, ժամի և տեղի մասին,
  - 4) ներկայացնում է Ծառայության պետին և այլ մարմիններին ու կազմակերպություններին համտեսի արդյունքների հիման վրա տրված Հանձնաժողովի եզրակացությունը,
  - 5) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

IV. ՀԱՄՏԵՍԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

14. Հանձնաժողովի նիստից առաջ Ծառայության պատասխանատու աշխատողի կողմից կատարվում է Հանձնաժողովին ներկայացվելիք նմուշների ծածկագրում՝ ապահովելով գաղտնիությունը: Յուրաքանչյուր նմուշ պիտակագրվում և փաթեթավորվում է, կազմվում է ծածկագրման ակտ, որում նշվում է՝

- 1) նմուշի նշաթիվը,
- 2) արտադրանքի անվանումը և խմբաքանակը,
- 3) նմուշառման ակտի համարը և թվականը, կնիքի պահպանվածությունը, նմուշի վիճակը: Ծածկագրման ակտը ծրարվում, կնքվում և հանձնվում է Հանձնաժողովի նախագահին կամ քարտուղարին և բացվում է միայն համտեման ավարտից և արդյունքների քննարկումից հետո:

15. Համտեման ներկայացվող նմուշների փաստացի ջերմաստիճանը պետք է համապատասխանի հայկական կոնյակների համար նախատեսված ջերմաստիճանային ցուցանիշին (18-20°C):

16. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում և անցկացվում են հատուկ կահավորված սենյակում, որտեղ յուրաքանչյուր համտեմողի աշխատատեղը մեկուսացվում է շրջապատող մասնակիցներից և ապահովված է բավարար լուսավորությամբ: Համտեման սրահում օդի ջերմաստիճանը պետք է լինի 18-20°C, բացառվում է օտար հոտերի և հոսանքների առկայությունը: Համտեման ընթացքում կարծիքների փոխանակում չի թույլատրվում:

17. Հանձնաժողովի մեկ նիստի ժամանակ համտեմի համար առաջարկվող նմուշների քանակը չպետք է գերազանցի 12-ը:

18. Հանձնաժողովի անդամները պետք է ապահովվեն զգայարանները պարբերաբար թարմացնող չեզոք համի ուտեստներով: Համտեմի սեղաններին պարտադիր են համտեմվող նմուշների քանակին համապատասխան համտեմի համար նախատեսված անգույն և թափանցիկ բաժակների և թքամանների առկայությունը:

19. Անհրաժեշտության դեպքում, աշխատանքները օպերատիվ կազմակերպելու նպատակով՝ համապատասխան պայմանների առկայության դեպքում, Հանձնաժողովը կարող է արտագնա նիստ հրավիրել մեծաքանակ արտադրանմուշ և կուպաժավորված ծավալներ ներկայացնող կազմակերպությունում:

20. Զգայաբանական գնահատականները մասնակիցների կողմից գրանցվում են հայկական կոնյակների համտեման թերթիկում (Ձև N 1) և հանձնվում նիստը նախագահողին, որը հաշվարկում է դրանց միջին թվաբանականը: Այնուհետև կազմակերպվում է մասնակիցների միջև տպավորությունների, կարծիքների և առաջարկությունների փոխանակում ու քննարկում: Ստացված միջին թվաբանական գնահատականները և քննարկման եզրակացությունները գրանցվում են Հանձնաժողովի ամփոփաթեթիկում (Ձև N 2), որը ստորագրում են Հանձնաժողովի բոլոր մասնակից անդամները:

21. Այն դեպքում, երբ առանձին նմուշների համար հաշվարկված միջին թվաբանական բալերը ցածր են ստացվում, համտեմային ամփոփաթեթիկում արձանագրվում է հատուկ բացասական եզրակացություն և կատարվում է նմուշների ապաժանկագրում:

22. Նիստի արդյունքներն ամփոփվում և կազմվում է արձանագրություն, որում ներառվում են՝

- 1) համտեմի անցկացման վայրը և ժամկետը,
- 2) նիստին մասնակցած Հանձնաժողովի կազմը (անուն, ազգանուն, պաշտոն),
- 3) համտեմի նպատակը,
- 4) համտեմված նմուշների ցանկը՝ նշելով անվանումը, արտադրող կազմակերպությունը, խմբաքանակը կամ կուպաժը,
- 5) համտեմված նմուշների միջին բալային գնահատականը,
- 6) քննարկումների ժամանակ մասնակիցների կողմից ներկայացված առարկություններն և առաջարկությունները,
- 7) Հանձնաժողովի եզրակացությունը համտեմի արդյունքների վերաբերյալ:

Ձև N 1

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՅԱԿՆԵՐԻ ՀԱՄՏԵՍՄԱՆ ԹԵՐԹԻԿ

--- 20 թ. N ---

Հայկական կոնյակների համտեմային հանձնաժողովի անդամ (մասնակից) \_\_\_\_\_

Համտեման վայրը \_\_\_\_\_

Հայկական կոնյակների գնահատումը (10 բալային համակարգով) ըստ որակի դասակարգման՝

- |                                     |                       |
|-------------------------------------|-----------------------|
| 1. օրդինար (սովորական)՝ 3-5 տարեկան | - 8.0 բալից ոչ պակաս. |
| 2. հնացրած՝ 6-7 տարեկան             | - 8.4 բալից ոչ պակաս. |
| 3. հնացրած բարձր որակի՝ 8-9 տարեկան | - 8.7 բալից ոչ պակաս. |
| 4. հին՝ 10-20 տարեկան               | - 9.0 բալից ոչ պակաս. |
| 5. շատ հին՝ 20-ից ավելի տարեկան     | - 9.2 բալից ոչ պակաս: |



